Ոչ Ռեզիդենտ իրավաբանական անձանց բանկային կամ առարկայազուրկ մետաղական հաշվի բացման փաստաթղթերի ցանկ

1. Հաճախորդի հիմնադիր փաստաթղթերը (կանոնադրությունը՝ իր բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ. հիմնադիր պայմանագիր նաև այլ համազոր փաստաթուղթ գրանցման երկրի օրենսդրությանը համապատասխան).
2. Պետական իրավասու մարմնի կողմից տրված վկայականը, նաև այլ համազոր փաստաթուղթ, որով հավաստվում է Հաճախորդի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի գրանցված լինելու փաստը.
3. Պետական իրավասու մարմնի կողմից տրված վկայականը կամ այլ համազոր փաստաթուղթ, որով հավաստվում է Հաճախորդի գրանցված լինելու փաստը և տեղեկատվությունը՝ իրավաբանական անձի գտնվելու վայրի հասցեի վերաբերյալ.
4. Պետական իրավասու մարմնի կողմից տրված վկայականը, նաև այլ համազոր փաստաթուղթ, որով հավաստվում է Հաճախորդի հարկային մարմնում հաշվառված լինելու փաստը (առկայության դեպքում),
5. Հաճախորդի կանոնադրական կապիտալի չափի, գրանցված սեփականատերերի վերաբերյալ պետական իրավասու մարմնի կողմից տրված վկայականը, նաև այլ համազոր փաստաթուղթ.
6. Պետական իրավասու մարմնի կողմից տրված վկայականը, նաև այլ համազոր փաստաթուղթ, որով հավաստվում է բաժնետոմսի, բաժնեմասի, փայի նկատմամբ սեփականատերերի (բաժնետերերի, մասնակիցներ, փայատերերի) սեփականության իրավունքը գրանցված լինելու փաստը.
7. Լիցենզավորվող գործունեություն իրականացնելու դեպքում՝ լիցենզիան.
8. Հաճախորդի իրավասու մարմնի որոշումը կամ որոշումից քաղվածքը՝ ղեկավարի կամ նրան փոխարինող անձի նշանակման վերաբերյալ.
9. Լիազորագիր կամ դրան համազոր փաստաթուղթը, որով հավաստվում է այն անձի/անձանց ցանկը և վերջինիս կողմից Հաճախորդի անունից բանկային հաշվով իրականացվող գործառույթների շրջանակը.
10. Ստորագրությունների նմուշների և կնիքի (առկայության դեպքում) դրոշմի քարտը.
11. Ստորագրությունների նմուշում որպես 1-ին և 2-րդ կարգի ստորագրության իրավունք ունեցող անձանց անձը հաստատող փաստաթղթերը.
12. Հաշվի բացման դիմում-պայմանագիրը.
13.Հաճախորդի կանոնադրական կապիտալի սեփականատերեր (բաժնետերեր, մասնակիցներ, փայատերեր) հանդիսացող ֆիզիկական անձանց համար՝ անձը հաստատող փաստաթղթերը.
14. Հաճախորդի կանոնադրական կապիտալի սեփականատերեր (բաժնետերեր, մասնակիցներ, փայատերեր) հանդիսացող իրավաբանական անձանց համար՝ սույն ենթահավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը:

15. Հայաստանի ֆինանսական համակարգից օգտվելու տնտեսական կամ այլ իրավաչափ հիմնավորում, օր.՝

- Հայաստանում բիզնես շահերը (օր.՝ շուկայի դիվերսիֆիկացում, ընդլայնում և տեղայնացում, համատեղ ձեռնարկություններ և գործընկերություններ, օտարերկրյա ներդրումներ և այլն):
- Պորտֆելի դիվերսիֆիկացում (օր.՝ ռիսկերի կառավարում՝ ներդրումների բաշխման միջոցով և այլն)

16. Տրված հիմնավորումների հիմք հանդիսացող համապատասխան փաստաթղթեր:

Ծանուցում.

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ հաճախորդների և վերջիններիս հետ կապված ֆիզիկական անձանց օտարալեզու բոլոր փաստաթղթերը ներկայացվում են նոտարական վավերացմամբ հայերեն լեզվով թարգմանությամբ, բացառությամբ ռուսերեն և/կամ անգլերեն լեզուներով ներկայացվող փաստաթղթերի (տվյալ դեպքում փաստաթղթերի պատճեները պետք է լինեն հյուպատոսական,նոտարական և/կամ ապոստիլով վավերացված):

Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կարգով» սահմանված այլ փաստաթղթեր:

Ռուսաստանի և Բելառուսի հետ առնչություն ունեցող իրավաբանական անձանց համար, հաշվի առնելով մեր թղթակից բանկի քաղաքականությունը, Եվրոյով միջազգային փոխանցումները կարող են սահմանափակվել՝ կախված վերոնշյալ երկրների հետ կապի բնույթից: